

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի սեպտեմբերի 18-ի 2000/54/ԵՀ
հրահանգ**

**Աշխատավայրում կենսաբանական նյութերի հետ շփմանն առնչվող վտանգներից
աշխատողներին պաշտպանելու մասին**

(յոթերորդ անհատական հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 137(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը(1),

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան(2),

Քանի որ

1) «Աշխատավայրում կենսաբանական նյութերի հետ շփմանն առնչվող վտանգներից
աշխատողներին պաշտպանելու մասին» Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 26-ի
90/679/ԵՏՀ հրահանգում (յոթերորդ անհատական հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1)
հոդվածի իմաստով) (3) մի շարք դեպքերում կատարվել են էական փոփոխություններ (4):
Հստակության և ռացիոնալության նկատառումներից ելնելով՝ 90/679/ԵՏՀ հրահանգը պետք
է կոդիֆիկացվի,

2) աշխատավայրում կենսաբանական նյութերի հետ շփմանն առնչվող վտանգներից
աշխատողների պաշտպանության առումով անվտանգության ու առողջության առավել
բարձր մակարդակ ապահովելու համար նախատեսված նվազագույն պահանջների հետ
համապատասխանությունը կարևոր է՝ աշխատողների անվտանգության ապահովման ու
առողջության պահպանման համար,

3) սույն Հրահանգն անհատական հրահանգ է՝ «Աշխատավայրում աշխատողների
անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների ներմուծման

մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով (5): Ուստի, այդ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են կենսաբանական նյութերի հետ շփվող աշխատողների նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

4) կենսաբանական նյութերի հետ շփման հետ կապված ռիսկերի մասին առավել ճշգրիտ տեղեկություններ կարող են ձեռք բերվել տվյալների վարման միջոցով,

5) կենսաբանական նյութերի ցանկն ու դասակարգումը պետք է պարբերաբար ուսումնասիրվեն և վերանայվեն գիտական նոր տվյալների հիման վրա,

6) մի շարք կենսաբանական նյութերի դեպքում՝ բացի դրանց դասակարգումից՝ պետք է նշվեն նաև լրացուցիչ տվյալներ,

7) գործատուները պետք է թարմ տեղեկություններ ունենան տեխնոլոգիայի ոլորտի վերջին զարգացումներից՝ աշխատողների առողջության պահպանման ու անվտանգության ապահովման պայմանների բարելավման նպատակով,

8) պետք է ձեռնարկվեն կանխարգելիչ միջոցներ՝ կենսաբանական նյութերի հետ շփվող աշխատողների առողջության պահպանման ու անվտանգության ապահովման համար,

9) սույն Հրահանգի ընդունումը գործնական քայլ է՝ ուղղված ներքին շուկայի սոցիալական ուղղվածության իրականացմանը,

10) Խորհրդի 74/325/ԵՏՀ որոշմանը համապատասխան՝ այս բնագավառում առաջարկներ մշակելու նպատակով Հանձնաժողովը պետք է խորհրդակցի Աշխատավայրում անվտանգության ապահովման, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ: Այդպիսի խորհրդակցություններ են իրականացվել սույն Հրահանգում ընդգրկված Խորհրդի հրահանգների մասին առաջարկներ մշակելիս,

11) սույն Հրահանգով չեն սահմանափակվում անդամ պետությունների՝ փոխատեղման վերջնաժամկետների հետ կապված պարտավորությունները, ինչպես սահմանված է VIII հավելվածի Բ մասով,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Նպատակը

1. Սույն Հրահանգի նպատակը աշխատողների առողջությունը պահպանելն ու աշխատավայրում կենսաբանական նյութերի հետ շփումից առաջացող կամ առաջացման հավանականությամբ վտանգներից նրանց անվտանգությունն ապահովելը, ինչպես նաև այդպիսի վտանգները կանխարգելելն է:

Դրանով այդ ոլորտին վերաբերող կոնկրետ նվազագույն դրույթներ են սահմանվում :

2. 89/391/ԵՏՀ հրահանգն ամբողջությամբ կիրառվում է 1-ին պարբերության մեջ նշված ամբողջ տարածքում՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

3. Սույն Հրահանգը կիրառվում է՝ չհակասելով Խորհրդի 90/219/ԵՏՀ(7) հրահանգի և Խորհրդի 90/220/ԵՏՀ (8) հրահանգի դրույթներին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով՝

ա) «կենսաբանական նյութեր» նշանակում է միկրոօրգանիզմներ՝ ներառյալ գենետիկորեն փոփոխված միկրոօրգանիզմները, բջջային կուլտուրաներ և մարդու օրգանիզմում բնակվող մակաբույծներ, որոնք կարող են վարակի, ալերգիայի կամ թունավորման պատճառ դառնալ.

բ) «միկրոօրգանիզմ» նշանակում է բջջային կամ ոչ բջջային որևէ միկրոկենսաբանական միավոր, որն ունակ է վերարտադրվելու կամ փոփոխվելու նյութի գենետիկ կառուցվածքը.

գ) «բջջային կուլտուրա» նշանակում է լաբորատոր պայմաններում բազմաբջիջ օրգանիզմներից առաջացող բջիջների աճեցում (in vitro):

«Կենսաբանական նյութերը» դասակարգվում են վտանգի չորս խմբում՝ ելնելով վարակի վտանգի մեծությունից՝

1. 1-ին խմբի կենսաբանական նյութ նշանակում է, որ դա, ամենայն հավանականությամբ, մարդկանց մոտ հիվանդություն չի առաջացնում.
2. 2-րդ խմբի կենսաբանական նյութ նշանակում է, որ դա մարդկանց մոտ կարող է հիվանդություն առաջացնել և կարող է վտանգավոր լինել աշխատողների համար. այն թերևս, չի տարածվում համայնքում. գոյություն ունեն դրա կանխարգելման կամ բուժման արդյունավետ միջոցներ.
3. 3-րդ խմբի կենսաբանական նյութ նշանակում է, որ դա կարող է ծանր հիվանդություն առաջացնել մարդկանց մոտ և կարող է լուրջ վտանգի աղբյուր լինել աշխատողների համար. այն համայնքում տարածման դեպքում կարող է վտանգավոր լինել, սակայն, սովորաբար, գոյություն ունեն դրա կանխարգելման կամ բուժման արդյունավետ միջոցներ.
4. 4-րդ խմբի կենսաբանական նյութ նշանակում է, որ դա ծանր հիվանդություն է առաջացնում մարդկանց մոտ և լուրջ վտանգի աղբյուր է աշխատողների համար. այն համայնքում տարածման դեպքում կարող է վտանգավոր լինել, և սովորաբար գոյություն չունի դրա կանխարգելման կամ բուժման արդյունավետ որևէ միջոց:

Հոդված 3

Գործողության ոլորտը. վտանգների որոշումը և գնահատումը

1. Սույն Հրահանգը կիրառվում է այնպիսի աշխատանքների նկատմամբ, որոնց դեպքում աշխատողներն իրենց աշխատանքի ընթացքում շփվում կամ կարող են շփվել կենսաբանական նյութերի հետ :
2. Կենսաբանական նյութերի հետ շփման վտանգ ներկայացնող ցանկացած աշխատանքի դեպքում պետք է որոշվի դրանց հետ աշխատողների շփման բնույթը, աստիճանը և տևողությունը՝ աշխատողների առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող ցանկացած վտանգի գնահատումը հնարավոր դարձնելու և ձեռնարկվելիք միջոցները սահմանելու համար:

Մի քանի խմբերի պատկանող կենսաբանական նյութերի հետ շփում ներառող աշխատանքների դեպքում վտանգը գնահատվում է՝ հաշվի առնելով առկա բոլոր վտանգավոր կենսաբանական նյութերի ներկայացրած վտանգը:

Գնահատումը պետք է թարմացվի պարբերաբար և այն դեպքում, երբ այնպիսի պայմաններում որևէ փոփոխություն է տեղի ունենում, որոնք կարող են ազդել կենսաբանական նյութերի հետ աշխատողների շփման վրա:

Գործատուն պահանջի հիման վրա պետք է իրավասու մարմիններ ներկայացնի գնահատման համար հիմք ծառայած տեղեկությունները:

3. 2-րդ պարբերության մեջ նշված գնահատումն իրականացվում է առկա բոլոր տեղեկությունների հիման վրա՝ ներառյալ հետևյալը՝

ա) այն կենսաբանական նյութերի դասակարգումը, որոնք վտանգավոր են կամ կարող են վտանգավոր լինել մարդու առողջության համար, ինչպես նշված է 18-րդ հոդվածում.

բ) իրավասու մարմնից առաջարկություններ այն մասին, որ կենսաբանական նյութի նկատմամբ պետք է իրականացվի հսկում՝ իրենց աշխատանքի ընթացքում այդպիսի կենսաբանական նյութի հետ շփվող կամ շփման հավանականություն ունեցող աշխատողների առողջությունը պահպանելու համար.

գ) տեղեկություններ այն հիվանդությունների մասին, որոնք աշխատողները կարող են այդ աշխատանքի ընթացքում ձեռք բերել.

դ) աշխատողների աշխատանքի ընթացքում առաջացող հնարավոր ալերգիկ կամ թունածին էֆեկտները.

ե) տեղեկություն այն հիվանդության մասին, որով, ինչպես պարզվել է, տառապում է աշխատողը, և որն անմիջական կապ ունի նրա աշխատանքի հետ:

Հոդված 4

Տարբեր հոդվածների կիրառությունը՝ կապված վտանգների գնահատման հետ

1. Եթե 3-րդ հոդվածում նշված գնահատման արդյունքներով ցույց է տրվում, որ շփումը և (կամ) հնարավոր շփումը 1-ին խմբի կենսաբանական նյութի հետ է, որից աշխատողների

առողջությանը որևէ վտանգ չի սպառնում, կիրառվում են 5–17–րդ հոդվածները և 19–րդ հոդվածը:

Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնվի VI հավելվածի 1–ին կետը:

2. Եթե 3–րդ հոդվածում նշված գնահատման արդյունքներով ցույց է տրվում, որ այդ աշխատանքի դեպքում կենսաբանական նյութի հետ աշխատելու կամ այն օգտագործելու կանխամտածված մտադրություն չկա, սակայն աշխատողները կարող են շփվել կենսաբանական նյութի հետ I հավելվածում ներառված ինդիկատիվ ցանկում նշված աշխատանքների ընթացքում, ապա կիրառվում են 5–րդ, 7–րդ, 8–րդ, 10–րդ, 11–րդ, 12–րդ, 13–րդ և 14–րդ հոդվածները, եթե 3–րդ հոդվածում նշված գնահատման արդյունքները դրանց ոչ անհրաժեշտ լինելը ցույց չեն տալիս :

ԳԼՈՒԽ II

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 5

Փոխարինումը

Գործատուն պետք է խուսափի վնասակար կենսաբանական նյութի օգտագործումից, եթե դա թույլ է տալիս աշխատանքի բնույթը, և փոխարինի այն այնպիսի կենսաբանական նյութով, որը, կախված հանգամանքներից, օգտագործման պայմաններում վտանգավոր չէ կամ գիտության վերջին նվաճումների ներկա փուլում աշխատողների առողջության համար ավելի քիչ վտանգավոր է:

Հոդված 6

Վտանգների նվազեցումը

1. Եթե 3–րդ հոդվածում նշված գնահատման արդյունքներով բացահայտվում է աշխատողների առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող որևէ վտանգ, ապա աշխատողների շփումը պետք է կանխարգելվի:

2. Եթե դա տեխնիկապես հնարավոր չէ, հաշվի առնելով աշխատանքը և 3-րդ հոդվածում նշված գնահատված ռիսկը, շփման վտանգը պետք է նվազեցվի՝ հասցնելով մինչև անհրաժեշտ ցածր մակարդակի՝ համապատասխան աշխատողների առողջությունն ու անվտանգությունը լավագույնս պաշտպանելու համար, ինչը պետք է իրականացվի, մասնավորապես, 3-րդ հոդվածում նշված գնահատման արդյունքների հիման վրա կիրառվելիք հետևյալ միջոցներով՝

ա) հնարավորինս քիչ թվով աշխատողների կողմից շփում կամ հնարավոր շփում.

բ) աշխատանքային գործընթացների և ինժեներական հսկողության միջոցների մշակում՝ աշխատավայրում կենսաբանական նյութերի արտանետումից խուսափելու կամ դրանց ծավալը նվազագույնին հասցնելու համար.

գ) պաշտպանության կոլեկտիվ միջոցներ և (կամ), եթե այլ միջոցներով հնարավոր չէ խուսափել շփումից, պաշտպանության անհատական միջոցներ.

դ) հիգիենայի պահպանման միջոցներ, որոնք համատեղելի են աշխատավայրից կենսաբանական նյութի վթարային փոխանցումը կամ արտանետումը կանխարգելելու կամ դրանց ծավալը նվազեցնելու նպատակի հետ.

ե) II հավելվածում պատկերված կենսաբանական վտանգի մասին զգուշացնող նշանի կամ զգուշացնող համապատասխան այլ նշանների օգտագործում.

զ) կենսաբանական նյութեր ներառող վթարների կարգավորման ծրագրերի մշակում.

է) անհրաժեշտության և տեխնիկապես հնարավոր լինելու դեպքում աշխատանքում օգտագործվող կենսաբանական նյութերի առկայության ստուգում դրանց առաջնային ֆիզիկական մեկուսացումից դուրս.

ը) աշխատողների կողմից թափոնների անվտանգ հավաքման, պահման և հեռացման միջոցներ՝ ներառյալ ապահով ու տարբերակելի տարաների օգտագործումը, անհրաժեշտության դեպքում, համապատասխան մշակումից հետո.

թ) աշխատավայրի տարածքում կենսաբանական նյութերի անվտանգ բեռնավորման–բեռնաթափման ու տեղափոխման միջոցառումներ:

Հոդված 7

Իրավասու մարմնի համար տրամադրվող տեղեկատվությունը

1. Եթե 3-րդ հոդվածում նշված գնահատման արդյունքներով բացահայտվում է աշխատողների առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող որևէ վտանգ, աշխատողները, պահանջի առկայության դեպքում, իրավասու մարմնին տրամադրում են համապատասխան տեղեկություններ հետևյալի մասին՝

ա) գնահատման արդյունքները.

բ) այն աշխատանքները, որոնց ընթացքում աշխատողները շփվել կամ կարող են շփվել կենսաբանական նյութերի հետ.

գ) շփում ունեցած աշխատողների թիվը.

դ) աշխատավայրում անվտանգության ու առողջության համար պատասխանատու անձի անունը և իրավասությունները.

ե) ձեռնարկված պաշտպանիչ ու կանխարգելիչ միջոցները՝ ներառյալ աշխատանքային գործընթացներն ու մեթոդները.

զ) արտաքին իրավիճակների արձագանքման ծրագիր՝ 3-րդ կամ 4-րդ խմբի կենսաբանական նյութի հետ շփումից, որը կարող է տեղի ունենալ ֆիզիկական մեկուսացման ռեժիմի խախտման դեպքում, աշխատողներին պաշտպանելու համար:

2. Գործատուներն անհապաղ տեղեկացնում են իրավասու մարմնին ցանկացած պատահարի կամ վթարի մասին, որի հետևանքով կարող է տեղի ունենալ կենսաբանական նյութի արտանետում, և որը մարդու մոտ կարող է առաջացնել լուրջ վարակ և (կամ) ծանր հիվանդություն:

3. 11-րդ հոդվածում նշված ցանկը և 14-րդ հոդվածում նշված բժշկական քարտը պետք է հասանելի լինեն իրավասու մարմնին, եթե կազմակերպությունը դադարեցնում է գործունեությունը՝ ազգային օրենքներին և (կամ) գործելակերպին համապատասխան:

Հիգիենան և անհատական պաշտպանությունը

1. Գործատուները պարտավոր են կենսաբանական նյութերի հետ աշխատանքի հետևանքով աշխատողների առողջությանը կամ անվտանգությանը վտանգ ներկայացնող բոլոր աշխատանքների դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելով հետևյալը՝

ա) աշխատողները չեն ուտում կամ չեն խմում աշխատանքային տարածքում, եթե կենսաբանական նյութերից վարակման վտանգ է առկա.

բ) աշխատողներին տրամադրվում է համապատասխան պաշտպանական հագուստ կամ այլ հատուկ հագուստ.

գ) աշխատողներն ապահովված են համապատասխան և պատշաճ լվացարաններով ու զուգարաններով, որտեղ կան աչքերի լվացման և (կամ) մաշկի ախտահանման միջոցներ.

դ) անհրաժեշտ պաշտպանական սարքավորումները՝

– պատշաճ կերպով պահվում են հատուկ նախատեսված վայրում,

– հնարավորության դեպքում ստուգվում և մաքրվում են նախքան օգտագործումը՝, իսկ օգտագործումից հետո՝ պարտադիր կերպով.

– նախքան հաջորդ օգտագործումը՝ անսարքության դեպքում վերանորոգվում կամ փոխարինվում են.

ե) ընթացակարգերը նախատեսված են մարդկային կամ կենդանական ծագման նմուշներ վերցնելու, օգտագործելու և մշակելու համար:

2. Աշխատանքային համազգեստները և պաշտպանական սարքավորումները՝ ներառյալ 1–ին պարբերությունում նշված պաշտպանական հագուստը, որոնք կարող են վարակված լինել կենսաբանական նյութերով, պետք է հանել աշխատանքային տարածքից դուրս և, նախքան երկրորդ ենթապարբերությունում նշված միջոցների ձեռնարկումը, դրանք պետք է այլ հագուստից անջատ պահվեն:

Գործատուն պետք է ապահովի այդպիսի հագուստի և պաշտպանական սարքավորումների վարակազերծումն ու մաքրումը, իսկ, անհրաժեշտության դեպքում, դրանց ոչնչացումը:

3. Աշխատողները չպետք է պատասխանատվություն կրեն 1-ին և 2-րդ պարբերություններում նշված միջոցների ծախսերի համար:

Հոդված 9

Աշխատողների տեղեկացվածությունը և վերապատրաստումը

1. Գործատուները համապատասխան միջոցներ են ձեռնարկում՝ աշխատողների կամ կազմակերպությունում կամ հաստատությունում աշխատողների ներկայացուցիչների համար առկա ամբողջ տեղեկատվության հիման վրա ապահովելու բավարար ու համապատասխան վերապատրաստում, մասնավորապես, հետևյալի վերաբերյալ տեղեկատվության և հրահանգների ձևով՝

ա) առողջությանը սպառնացող հնարավոր վտանգներ,

բ) շփումը կանխարգելելու նպատակով ձեռնարկվող նախազգուշական միջոցներ.

գ) հիգիենայի պահանջներ,

դ) պաշտպանական սարքավորումների ու հագուստի կրում և օգտագործում,

ե) վթարների դեպքում և վթարները կանխարգելելու ուղղությամբ աշխատողների կողմից ձեռնարկվող միջոցներ:

2. Վերապատրաստման դասընթացը պետք է՝

ա) անցկացվի կենսաբանական նյութերի հետ շփում ենթադրող աշխատանքի մեկնարկին.

բ) համապատասխանեցված լինի նոր կամ փոփոխված վտանգները հաշվի առնելու առումով, և

գ) անհրաժեշտության դեպքում, պարբերաբար անցկացվի:

Հոդված 10

Աշխատողների մասին տեղեկությունները կոնկրետ դեպքերում

1. Գործատուները տալիս են գրավոր հրահանգներ աշխատավայրում և, անհրաժեշտության դեպքում, ցուցադրում հայտարարություններ, որոնք առնվազն ներառում են այն ընթացակարգը, որին պետք է հետևել հետևյալ դեպքում՝

ա) կենսաբանական նյութի օգտագործմամբ լուրջ պատահար կամ վթար.

բ) 4-րդ խմբի կենսաբանական նյութի օգտագործում:

2. Կենսաբանական նյութի օգտագործմամբ պատահարի կամ վթարի մասին աշխատողներն անմիջապես հայտնում են պատասխանատու անձին կամ աշխատանքում անվտանգության ու առողջության համար պատասխանատու անձին:

3. Գործատուներն անհապաղ տեղեկացնում են աշխատողներին և (կամ) աշխատողների ներկայացուցիչներին պատահարի կամ վթարի մասին, որի հետևանքով կարող է տեղի ունենալ կենսաբանական նյութի արտանետում, և որը մարդու մոտ կարող է առաջացնել ծանր վարակ և (կամ) հիվանդություն:

Բացի դրանից, երբ տեղի է ունենում լուրջ պատահար կամ վթար, գործատուները հնարավորինս արագորեն տեղեկացնում են աշխատողներին և (կամ) կազմակերպությունում կամ հաստատությունում աշխատողների ներկայացուցիչներին դրա հետևանքների և այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել կամ պետք է ձեռնարկվեն՝ իրավիճակը կարգավորելու համար:

4. Յուրաքանչյուր աշխատողի համար պետք է հասանելի լինի 11-րդ հոդվածում նշված ցանկում ներառված՝ իր անձին վերաբերող տեղեկատվությունը:

5. Աշխատողների և (կամ) կազմակերպությունում կամ հաստատությունում աշխատողների ներկայացուցիչների համար պետք է հասանելի լինեն հավաքական անանուն տեղեկությունները:

6. Գործատուները 7(1) հոդվածով նախատեսված տեղեկությունները տրամադրում են աշխատողներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին՝ նրանց կողմից պահանջի դեպքում:

Հոդված 11

Կենսաբանական նյութերի ազդեցությանը ենթարկված աշխատողների ցուցակը

1. Գործատուներն ունեն 3-րդ և (կամ) 4-րդ խմբի կենսաբանական նյութերի ազդեցությանը ենթարկված աշխատողների անվանացանկը՝ նշելով կատարված աշխատանքի տեսակը և, հնարավորության դեպքում, այն կենսաբանական նյութը, որի ազդեցությանը ենթարկվել է աշխատողը, անհրաժեշտության դեպքում՝ նաև ազդեցությունների, պատահարների ու վթարների մասին արձանագրությունները:

2. 1-ին պարբերության մեջ նշված ցուցակը՝ աշխատողին ազդեցության ենթարկվելուց հետո պահպանվում է առնվազն 10 տարի՝ ազգային օրենքներին և (կամ) գործելակերպին համապատասխան:

Հետևյալ տեսակների վարակներ առաջացնող շփումների դեպքում՝

ա) վարակներ այնպիսի կենսաբանական նյութերից, որոնք հայտնի են մշտական կամ գաղտնի վարակների առաջացման հնարավորությամբ.

բ) վարակներ, որոնք գիտության ներկա փուլում չեն ախտորոշվում մինչև բազում տարիների ընթացքում հիվանդության զարգացումը.

գ) վարակներ, որոնք մինչև հիվանդության զարգացման փուլը ինկուբացիոն առանձնահատուկ երկար շրջան ունեն.

դ) վարակներ, որոնք, չնայած բուժմանը, առաջացնում են երկար ժամանակ հետո նորից սրվող հիվանդություններ.

ե) վարակներ, որոնք կարող են երկարաժամկետ լուրջ բարդություններ ունենալ.

անվանացանկը, ըստ անհրաժեշտության, պահպանվում է առավել երկար ժամանակ՝ հայտնի վերջին շփումից հետո մինչև 40 տարի:

3. 14-րդ հոդվածում հիշատակված բժիշկը և (կամ) աշխատավայրում առողջության պահպանման ու անվտանգության ապահովման հարցերով զբաղվող իրավասու մարմինը և աշխատավայրում առողջության պահպանման ու անվտանգության ապահովման համար պատասխանատու ցանկացած այլ անձ պետք է 1-ին պարբերության մեջ նշված անվանացանկից օգտվելու իրավունք ունենան:

Հոդված 12

Աշխատողների հետ խորհրդակցությունը և նրանց մասնակցությունը

Աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցությունն ու նրանց մասնակցությունը սույն Հրահանգով կարգավորվող խնդիրներին տեղի է ունենում 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածին համապատասխան:

Իրավասու մարմիններին ծանուցումը

1. Իրավասու մարմինը նախապես տեղեկություններ է ստանում հետևյալ խմբերի կենսաբանական նյութերի առաջին անգամ օգտագործման մասին՝

ա) 2-րդ խմբի կենսաբանական նյութեր.

բ) 3-րդ խմբի կենսաբանական նյութեր.

գ) 4-րդ խմբի կենսաբանական նյութեր:

Տեղեկությունները տրամադրվում են աշխատանքի մեկնարկից առնվազն 30 օր առաջ:

Համաձայն 2-րդ պարբերության՝ նախապես տեղեկացվում է նաև 4-րդ խմբում ընդգրկված յուրաքանչյուր հերթական կենսաբանական նյութի և 3-րդ խմբում ընդգրկված յուրաքանչյուր հերթական նոր կենսաբանական նյութի առաջին անգամ օգտագործման մասին, եթե գործատուն ինքն է պայմանականորեն դասակարգում տվյալ կենսաբանական նյութը:

2. 4-րդ խմբի կենսաբանական նյութերի հետ կապված ախտորոշման ծառայություններ մատուցող լաբորատորիաները պետք է նախնական տեղեկություններ հայտնեն միայն իրենց դիտարկումների մասին:

3. Պետք է տեղեկությունները թարմացվեն, եթե գործընթացներում և (կամ) ընթացակարգերում տեղի են ունենում աշխատավայրում անվտանգության կամ առողջության համար կարևորություն ներկայացնող էական փոփոխություններ, որի հետևանքով տրամադրված տեղեկությունները դառնում են ոչ արդիական:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված տեղեկությունները ներառում են՝

ա) ընկերության և (կամ) հաստատության անվանումն ու հասցեն.

բ) աշխատավայրում անվտանգության ապահովման ու առողջության պահպանման համար պատասխանատու անձի անունը և իրավասությունները.

գ) 3-րդ հոդվածում նշված գնահատման արդյունքները.

դ) կենսաբանական նյութի տեսակը.

ե) նախատեսված պաշտպանական ու կանխարգելիչ միջոցները:

ԳԼՈՒԽ III

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 14

Բժշկական հսկողությունը

1. Անդամ պետությունները, ազգային օրենքներին ու գործելակերպին համապատասխան, սահմանում են միջոցառումներ՝ ուղղված այն աշխատողների նկատմամբ համապատասխան բժշկական հսկողություն իրականացնելուն, որոնց համար 3-րդ հոդվածում գնահատման արդյունքներով առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող վտանգ է բացահայտվել:

2. 1-ին պարբերությունում նշված միջոցառումները պետք է այնպիսին լինեն, որ յուրաքանչյուր աշխատող, անհրաժեշտության դեպքում, կարողանա ենթարկվել առողջության համապատասխան հսկողության՝

ա) նախքան շփումը,

բ) դրանից հետո կանոնավոր ընդմիջումներով:

Այդ միջոցառումները պետք է այնպիսին լինեն, որ անմիջապես հնարավոր լինի իրականացնել անհատական ու աշխատանքի հետ կապված հիգիենայի պահպանման միջոցներ:

3. 3-րդ հոդվածում նշված գնահատման միջոցով պետք է բացահայտվեն այն աշխատողները, որոնց համար կարող են պահանջվել հատուկ պաշտպանական միջոցներ:

Անհրաժեշտության դեպքում, արդյունավետ պատվաստանյութեր պետք է տրամադրվեն այն աշխատողներին, որոնք այլևս դիմադրողականություն չունեն այն կենսաբանական նյութի նկատմամբ, որի հետ շփվում են կամ կարող են շփվել:

Երբ գործատուները տրամադրում են պատվաստանյութեր, նրանք պետք է հաշվի առնեն VII հավելվածով սահմանված գործելակերպի առաջարկվող կանոնները:

Եթե որևէ աշխատողի մոտ հայտնաբերվում է այնպիսի վարակ կամ այնպիսի հիվանդություն, որը շփման հետևանք է, բժիշկը կամ աշխատողների բժշկական

հսկողության համար պատասխանատու մարմինն այդպիսի հսկողության առաջարկ է անում նման շփում ունեցած այլ աշխատողների:

Այդ դեպքում իրականացվում է շփման վտանգի վերագնահատում՝ 3-րդ հոդվածին համապատասխան:

4. Եթե բժշկական հսկողություն է իրականացվում, ապա անհատական բժշկական քարտը պահպանվում է ազդեցության ենթարկվելուց հետո առնվազն 10 տարի՝ ազգային օրենքներին և գործելակերպին համապատասխան:

Երկրորդ ենթապարբերության 11(2) հոդվածում նշված հատուկ դեպքերում՝ անհատական բժշկական քարտը պահպանվում է առավել երկար ժամանակ՝ հայտնի վերջին շփումից հետո մինչև 40 տարի:

5. Բժիշկը կամ բժշկական հսկողության համար պատասխանատու մարմինն առաջարկում է բոլոր պաշտպանական կամ կանխարգելիչ միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն յուրաքանչյուր աշխատողի առնչությամբ:

6. Աշխատողներին պետք է տրվեն տեղեկություններ և խորհուրդներ բժշկական հսկողության վերաբերյալ, որին նրանք կարող են ենթարկվել կենսաբանական նյութի հետ շփումից հետո:

7. Ազգային օրենսդրությանը և (կամ) գործելակերպին համապատասխան՝

ա) աշխատողները պետք է ունենան իրենց վերաբերող բժշկական հսկողության արդյունքներից օգտվելու հնարավորություն, և

բ) համապատասխան աշխատողները կամ գործատուն կարող են պահանջել բժշկական հսկողության արդյունքների վերանայում:

8. Աշխատողների բժշկական հսկողության վերաբերյալ գործնական առաջարկությունները ներկայացված են IV հավելվածում:

9. Ազգային օրենքներին և (կամ) գործելակերպին համապատասխան բացահայտված հիվանդությունների կամ մահվան բոլոր դեպքերի մասին, որոնք առաջացել են կենսաբանական նյութերի հետ մասնագիտական աշխատանքի ընթացքում շփման հետևանքով, տեղեկացնում են իրավասու մարմնին:

Հոդված 15

Ախտորոշիչ լաբորատորիաներից բացի՝ առողջապահական և անասնաբուժական խնամքի մյուս հաստատությունները

1. 3-րդ հոդվածում նշված գնահատման նպատակներից ելնելով՝ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի՝

ա) մարդկանց կամ կենդանիների մոտ կենսաբանական նյութերի առկայության մասին կասկածներին և նրանցից վերցված նյութերին ու նմուշներին.

բ) մարդկանց կամ կենդանիների մոտ հայտնաբերված կամ կասկածվող կենսաբանական նյութերի կողմից պատճառվող վնասին և նրանցից վերցված նյութերին ու նմուշներին.

գ) աշխատանքի բնույթի հետևանքով սպառնացող վտանգները:

2. Անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկվեն առողջապահական և անասնաբուժական հաստատություններում նշված աշխատողների առողջության պահպանման ու անվտանգության ապահովման համար:

Ձեռնարկվելիք միջոցների շարքում են մասնավորապես՝

ա) ախտահանման ու վարակազերծման համապատասխան ընթացակարգերի սահմանում, և

բ) ախտահարված թափոնների անվտանգ տեղափոխումն ու հեռացումը հնարավոր դարձնող ընթացակարգերի իրականացում:

3. Մեկուսարաններում, որտեղ կան 3-րդ խմբի կամ 4-րդ խմբի կենսաբանական նյութերով վարակված կամ վարակված լինելու մեջ կասկածվող մարդիկ կամ կենդանիներ, հերմետիկության պահպանման միջոցներն ընտրվում են V հավելվածի Ա սյունակից՝ վարակի տարածման վտանգը նվազեցնելու նկատառումներով:

Հոդված 16

Հատուկ միջոցներ՝ արտադրական գործընթացների, լաբորատորիաների և կենդանիների համար նախատեսված սենյակների համար

1. Լաբորատորիաներում, այդ թվում՝ ախտորոշիչ լաբորատորիաներում և լաբորատոր փորձերի ենթարկվող այն կենդանիների համար նախատեսված սենյակներում, որոնք

ակամա վարակվել են 2-րդ, 3-րդ կամ 4-րդ խմբի կենսաբանական նյութերով, կամ որոնք այդպիսի նյութեր կրողներ են կամ կասկածվում է, որ կարող են լինել այդպիսիք, ձեռնարկվում են հետևյալ միջոցները:

ա) Գիտահետազոտական, ուսուցողական կամ ախտորոշման նպատակներով 2-րդ, 3-րդ կամ 4-րդ խմբի կենսաբանական նյութերի հետ աշխատանք իրականացնող լաբորատորիաները հերմետիկության պահպանման միջոցները սահմանում են V հավելվածին համապատասխան՝ վարակի տարածման վտանգը նվազեցնելու նկատառումներով:

բ) 3-րդ հոդվածում նշված գնահատումից հետո միջոցները սահմանվում են V հավելվածին համապատասխան վտանգավորության աստիճանի հիման վրա կենսաբանական նյութերի համար պահանջվող ֆիզիկական հերմետիկության աստիճանը սահմանելուց հետո:

Այն աշխատանքները, որոնց ընթացքում օգտագործվում են կենսաբանական նյութեր, պետք է իրականացվեն՝

- 2-րդ խմբի կենսաբանական նյութի դեպքում՝ հերմետիկության առնվազն 2-րդ աստիճանին համապատասխանող աշխատանքային տարածքում.
- 3-րդ խմբի կենսաբանական նյութի դեպքում՝ հերմետիկության առնվազն 3-րդ աստիճանին համապատասխանող աշխատանքային տարածքում.
- 4-րդ խմբի կենսաբանական նյութի դեպքում՝ հերմետիկության առնվազն 4-րդ աստիճանին համապատասխանող աշխատանքային տարածքում:

գ) Հերմետիկության առնվազն 2-րդ աստիճան պետք է պահպանվի այն լաբորատորիաներում, որոնցում օգտագործվում են այնպիսի նյութեր, որոնք մարդու մոտ հիվանդություններ առաջացնելու հավանականություն ունեցող կենսաբանական նյութերի առկայության առումով կասկածների տեղիք են տալիս, սակայն այդպիսի լաբորատորիաներում իրականացվող հիմնական աշխատանքը, որպես այդպիսին, կապված չէ կենսաբանական նյութերի հետ (այն է՝ բջիջների աճեցում կամ կոնցենտրացում): Անհրաժեշտության դեպքում, պետք է կիրառվի հերմետիկության 3-րդ կամ 4-րդ աստիճանը, եթե հայտնի է կամ կասկածվում է, որ դրանք անհրաժեշտ են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ազգային իրավասու մարմինների կողմից տրված ուղեցույցներով ցույց է տրվում, որ որոշ դեպքերում անհրաժեշտ է կիրառել հերմետիկության ավելի ցածր աստիճան:

2. 2-րդ, 3-րդ կամ 4-րդ խմբի կենսաբանական նյութեր օգտագործող արտադրական գործընթացների առնչությամբ պետք է ձեռնարկվեն հետևյալ միջոցները:

ա) 1(բ) պարբերության երկրորդ ենթապարբերությունում նշված հերմետիկության պահպանման սկզբունքները պետք է կիրառվեն նաև արտադրական գործընթացների նկատմամբ՝ VI հավելվածում նշված գործնական միջոցների և համապատասխան ընթացակարգերի հիման վրա:

բ) 2-րդ, 3-րդ կամ 4-րդ խմբի կենսաբանական նյութերի օգտագործման հետ կապված վտանգի գնահատման արդյունքներին համապատասխան՝ իրավասու մարմինները կարող են սահմանել համապատասխան միջոցներ, որոնք պետք է կիրառվեն այդպիսի կենսաբանական նյութերն արտադրական նպատակներով օգտագործելու դեպքում:

3. Եթե 1-ին և 2-րդ պարբերություններում ներառված բոլոր աշխատանքների կապակցությամբ հնարավոր չի եղել իրականացնել կենսաբանական նյութի վերջնական գնահատում, սակայն պարզվում է, որ դրա նախատեսված օգտագործումը կարող է լուրջ վտանգ ներկայացնել աշխատողների առողջությանը, ապա այդ աշխատանքները կարող են իրականացվել միայն այն աշխատատեղերում, որտեղ ապահովված է հերմետիկության առնվազն 3-րդ աստիճանը:

Հոդված 17

Օգտագործված տվյալները

Հանձնաժողովի համար ապահովվում է ազգային իրավասու մարմինների կողմից օգտագործված՝ 14(9) հոդվածում նշված տեղեկությունների մատչելիությունը:

Հոդված 18

Կենսաբանական նյութերի դասակարգումը

1. Համայնքի կողմից դասակարգման համար հիմք են ընդունվում 2-րդ հոդվածի երկրորդ պարբերության 2-4-րդ կետերում նշված սահմանումները (2-4-րդ խմբեր):

2. Մինչ Համայնքի կողմից իրականացվող դասակարգման ավարտը, անդամ պետությունները, հիմք ընդունելով 2-րդ հոդվածի երկրորդ պարբերության 2-4-րդ կետերում

նշված սահմանումները (2-4-րդ խմբեր), դասակարգում են այն կենսաբանական նյութերը, որոնք վտանգավոր են կամ կարող են վտանգավոր լինել մարդու առողջության համար:

3. Եթե գնահատման ենթակա կենսաբանական նյութը չի կարող դասակարգվել 2-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ սահմանված խմբերից որևէ մեկում, ապա մի շարք այլընտրանքների դեպքում այն պետք է դասակարգվի վտանգավորության ամենաբարձր աստիճան ունեցող խմբում:

Հոդված 19

Հավելվածներ

Տեխնիկական առաջընթացի, միջազգային նորմերում կամ տեխնիկական պահանջներում տեղի ունեցող փոփոխությունների և կենսաբանական նյութերին առնչվող ոլորտում նորահայտ փաստերի ներքո՝ հավելվածներում կատարվում են միայն տեխնիկական բնույթի ճշգրտումներ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 20

Հանձնաժողովին տեղեկացնելը

Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի այն դրույթները, որոնք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 21

Ուժը կորցրած ճանաչելը

VIII հավելվածի Ա մասում նշված հրահանգներով փոփոխված 90/679/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով VIII հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգների փոխատեղման վերջնաժամկետներին վերաբերող անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգներին հղումները պետք է հասկացվեն որպես սույն Հրահանգին կատարված հղումներ և համեմատվում են IX հավելվածով սահմանված համեմատական աղյուսակին համապատասխան:

Հոդված 22

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

Հոդված 23

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 2000 թվականի սեպտեմբերի 18-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից

1) Տե՛ս VIII հավելվածի Ա մասը:

2) ՊՏ L 183, 29.06.1989թ., էջ 1:

3) ՊՏ L 185, 09.07.1974թ., էջ 15: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ:

4) Խորհրդի 1990 թվականի ապրիլի 23-ի 90/219/ԵՏՀ հրահանգ «Գենետիկորեն փոփոխված միկրոօրգանիզմների սահմանափակ գործածության մասին» (ՊՏ L 117, 08.05.1990թ., էջ 1): 98/81/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 330, 05.12.1998թ., էջ 13):

5) Խորհրդի 1990 թվականի ապրիլի 23-ի 90/220/ԵՏՀ հրահանգ “Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների՝ շրջակա միջավայր միտումնավոր արտանետման մասին” (ՊՏ L 117, 08.05.1990թ., էջ 15): 97/35/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 169, 27.06.1997թ., էջ 72):

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆԴԻԿԱՏԻՎ ՑԱՆԿԸ

(Հոդված 4(2))

1. Աշխատանք սննդի արտադրության գործարաններում:
 2. Աշխատանք գյուղատնտեսության ոլորտում:
 3. Կենդանիների և (կամ) կենդանական ծագման արտադրանքների հետ շփում ունեցող աշխատանքներ:
 4. Աշխատանք առողջապահական հաստատություններում, այդ թվում՝ մեկուսարաններում և դիախերձարաններում:
 5. Աշխատանք կլինիկական, անասնաբուժական և ախտորոշիչ լաբորատորիաներում՝ բացառությամբ միկրոկենսաբանական ախտորոշիչ լաբորատորիաների:
 6. Աշխատանք թափոնների հեռացման կայաններում:
 7. Աշխատանք կոյուղու մաքրման կայաններում:
- 2-րդ հոդված, երկրորդ պարբերություն և 18-րդ հոդված

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ

1. Սույն Հրահանգի գործողության ոլորտին համապատասխան՝ դասակարգված ցանկում պետք է ընդգրկվեն միայն այն նյութերը, որոնք հայտնի են որպես մարդուն վարակող միջոց:

Հարկ եղած դեպքում՝ նշումներ են կատարվում նաև այդ նյութերի՝ թունավորում և ալերգիա առաջացնելու հնարավորության մասին:

Հաշվի չեն առնվում կենդանական և բուսական այն ախտածինները, որոնք չեն ազդում մարդու վրա:

Դասակարգված կենսաբանական նյութերի այդ ցանկը կազմելիս հաշվի չեն առնվել գենետիկորեն փոփոխված միկրոօրգանիզմները:

2. Դասակարգված նյութերի ցանկի համար հիմք է ընդունվում առողջ աշխատողների վրա այդ նյութերի ունեցած ազդեցությունը:

Հատուկ հաշվի չեն առնվում այնպիսի անձանց վրա գործող առանձին ազդեցությունները, որոնց ընկալունակությունը կարող է պայմանավորված լինել որևէ այլ գործոնով, օրինակ՝ մինչ այդ գոյություն ունեցող հիվանդություն, դեղորայք, դիմադրողականության անկում, հղիություն կամ կրծով կերակրելը:

Այդպիսի աշխատողներին սպառնացող ավելի մեծ վտանգը պետք է քննարկվի որպես սույն Հրահանգով պահանջվող վտանգի գնահատման մաս:

3-րդ կամ 4-րդ խմբերի կենսաբանական նյութերի հետ փաստացի կամ հնարավոր շփում ենթադրող որոշակի արտադրական գործընթացներում, լաբորատոր աշխատանքներում կամ կենդանիների հետ կատարվող որոշակի աշխատանքներում, ձեռնարկված տեխնիկական բնույթի նախազգուշական միջոցները պետք է համապատասխանեն Հրահանգի 16-րդ հոդվածի դրույթներին:

3. 2-4-րդ խմբերում չդասակարգված կենսաբանական նյութերը անպայմանորեն չեն դասակարգվում 1-ին խմբում:

Այն նյութերի դեպքում, որոնց մեկից ավելի տեսակներն են հայտնի որպես մարդու համար ախտածին, ցանկում կներառվեն հիվանդություններ առաջացնող՝ ամենից հաճախ հանդիպող տեսակները և ավելի ընդհանուր տեղեկություններ կնշվեն այն մասին, որ նույն դասի մյուսի տեսակները նույնպես կարող են ազդեցություն ունենալ առողջության վրա:

Երբ կենսաբանական նյութերի դասակարգված ցանկում նշվում է մի ամբողջ դաս, պարզ է, որ ախտածին չհամարվող տեսակները և տարատեսակները հաշվի չեն առնվում:

4. Եթե որևէ տարատեսակում թուլանում կամ կորում է դրա հայտնի ախտածին գենը, ապա դրա հիմնական տեսակի դասակարգմամբ պահանջված հերմետիկությունը կարող է անպայմանորեն չկիրառվել՝ ելնելով աշխատավայրում վտանգի համար անհրաժեշտ գնահատման արդյունքներից:

Սա տեղի է ունենում, օրինակ, երբ այդպիսի որևէ տարատեսակ պետք է օգտագործվի որպես արտադրանք կամ արտադրանքի մի մաս՝ կանխարգելիչ կամ բուժման նպատակներով:

5. Այդ ցանկի սահմանման համար օգտագործված դասակարգված նյութերի անվանացանկը հիմնված է դասակարգման մասին վերջին միջազգային համաձայնագրերի և ցանկը կազմելու պահին գործող նյութերի անվանացանկի վրա և համապատասխանում է դրանց:

6. Դասակարգված կենսաբանական նյութերի ցանկն արտացոլում է դրա ծրագրման ժամանակ գիտության վերջին նվաճումները:

Այն անմիջապես կթարմացվի, երբ այլևս չի արտացոլի գիտության վերջին նվաճումները:

7. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ բոլոր վիրուսները, որոնք արդեն մեկուսացվել են մարդկանց օրգանիզմներում և չեն գնահատվել ու ընդգրկվել այս Հավելվածում, դասակարգվեն նվազագույնը 2-րդ խմբում, բացառությամբ այն դեպքերի, երբ անդամ պետությունները հաստատում են, որ դրանք, ամենայն հավանականությամբ, հիվանդություն չեն առաջացնում մարդկանց մոտ:

8. 3-րդ խմբում դասակարգված որոշ կենսաբանական նյութեր, որոնք կից ներկայացված ցանկում նշված են երկու աստղանիշով, կարող են վարակի փոքր վտանգ ներկայացնել աշխատողների համար, որովհետև դրանք սովորաբար չեն փոխանցվում օդակաթիլային ճանապարհով:

Անդամ պետությունները գնահատում են այդպիսի նյութերի նկատմամբ կիրառվելիք հերմետիկության պահպանման միջոցները՝ հաշվի առնելով համապատասխան կոնկրետ գործողությունների բնույթը և օգտագործվող նյութի ծավալը՝ նպատակ ունենալով որոշել՝ արդյոք կոնկրետ հանգամանքներում կարելի է բաց թողնել այդ միջոցներից մի քանիսը:

9. Մակաբույծների դասակարգման արդյունքում որոշվող՝ հերմետիկության պահպանմանը վերաբերող պահանջները կիրառվում են միայն մակաբույծի կենսացիկլի այն փուլերում, երբ այն վարակի վտանգ է ներկայացնում մարդկանց համար աշխատավայրում:

10. Այդ ցանկում առանձին նշում է կատարվում, եթե կենսաբանական նյութերը կարող են առաջացնել թունավոր կամ ալերգիկ ռեակցիաներ, եթե առկա է արդյունավետ պատվաստանյութ, կամ եթե խորհուրդ է տրվում այդպիսի կենսաբանական նյութերի հետ շփում ունեցած աշխատողների ցուցակը պահել 10 տարուց ավելի: